ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

18.05.2023 թ. ք. Իջևան

Առցանց կազմակերպված նիստին մասնակցել են գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Գ. Հովհաննիսյանը, Թ. Վարդանյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Լ. Մնացականյանը: Նիստին հրավիրված էր Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ՝ Գ. Սիրոյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ամփոփման մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան):
2. Կրթական ծրագրերի վերանայման հանձանաժողովի աշխատանքների կատարման ընթացքի մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Թ. Վարդանյան):
3. Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Ա. Մարգարյան):
4. Ֆալուտետի մասնագիտությունների ուսումնական պլանների քննարկման և հաստատման (2023-2024) մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան, Թ. Վարդանյան):

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

- հաստատել նիստի օրակարգը:

1. Լսեցին. - Ֆակուլտետի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքների ամփոփման մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան):

Լսեցին- «Ֆինանսներ» ԲԿԾ ղեկավար Ա. Սաիրբեկյանին, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ Գ. Միրոյանին:

Ա. Սարբեկյանը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ ուսանողի կողմից բակալավրի ծրագրի ելքային կրթական արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով և պաշտպանությամբ: Այդ պատճառով կարևորվում է ավարտական աշխատանքների նախապաշտպանության պատշաճ կազմակերպումը և անցկացումը: Ա. Սարիբեկյանը նշեց, որ ապրիլի 22-ին անց է կացվել ավարտական աշխատանքների նախապաշտպանություն, որին մասնակցել են Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ Գ. Սիրոյանը, կրթական ծրագրի ղեկավարը:

Ավարտական աշխատանքների ղեկավարները, համաձայն հաստատված գրաֆիկի, կատարել են խորհրդատվություններ, և այս պահի դրությամբ ուսանողների մեծ մասի աշխատանքների կատարման

ընթացքը համապատասխանում է սահմանված ժամանակացույցին: ԿԾ ղեկավարը նշեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի՝ ավարտական աշխատանքները ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ:

Գ. Սիրոյանը նախապաշտպանությունը գնահատեց արդյունավետ: Ուսանողներին արված դիտողությունների վերացման դեպքում պաշտպանությունն ավելի դյուրին կլինի:

Լսեցին.-Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ «Զբոսաշրջություն» մասնագիտության ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը իրականացվել է համապատասխան գործող ժամանակացույցի (ապրիլի 29-ին): Նախապաշտպանությանը մասնակցել են ֆակուլտետի Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչը, կրթական ծրագրի պատասխանատուն և ավարտական աշխատանքների ղեկավարները: Այս ձևաչափը հնարավորություն է տալիս տեղում շտկել և լուծում տալ նկատվող թերություններին և խնդիրներին: Անհատական վերաբերմունք ցուցաբերելով յուրաքանչյուրին՝ վեր հանվեցին ավարտական աշխատանքներում առկա թերությունները և տրվեց մասնագիտական խորհրդատվություն դրանց վերացման ուղղությանբ: Նա հայտնեց, որ համաձայն մասնաճյուղի կողմից սահմանված կարգի, ավարտական աշխատանքները ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման: Ամբիոնը հաստատել է գրախոսների ցուցակը: Գրախոսությունները պատրաստ պետք է լինեն պաշտպանությունից առնվազն 5 օր առաջ:

Արտահայտվեցին.- Ա. Պոտոսյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքներն ընդունել ի գիտություն:

2. ***Լսեցին.- Կրթական ծրագրերի վերանայման հանձանաժողովի աշխատանքների կատարման ընթացքի մասին (զեկ. Ա. Սարիբեկյան, Թ. Վարդանյան):***

Ա. Սարիբեկյանը հաղորդեց, որ կրթական ծրագրերի վերանայման հանձնաժողովի հետ համատեղ աշխատանքի շնորհիվ «Ֆինանսներ» (ըստ ոլորտների) ԿԾ ամբողջությամբ պատրաստ է և ներկայացված է ՈՒՄՎ:

Վերանայվել են ծրագրի դասընթացների նկարագրիչները: Բարձր կրեդիտները տրվել են մասնագիտության համար առանցքային նշանակություն ունեցող դասընթացներին, որոնք ընտրվել են դասախոսական կազմի մեծամասնության առաջարկով: Դասընթացների մեծ մասի գնահատման չափանիշում, նույնպես դասախոսական կազմի առաջարկով, մասնակցության միավորը տրվել է ընթացիկ ստուգմանը և ինքնուրույն աշխատանքին:

Թ. Վարդանյանը հաղորդեց, որ «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խումբը առաջնորդվել է համապատասխան աշխատանքային խմբի օրացուցային պլանով:

Մշակվել են վերանայման խմբի գործողությունները և դրանց ժամկետները: Ծրագրում դասավանդող դասախոսները, ուսանողները և արտաքին շահակիցները ներկայացրել են իրենց առաջարկները կրթական ծրագրի վերաբերյալ: Վերանայվել են կրթական ծրագրի նպատակները, խնդիրները, վերջնարդյունքները:

Կրթական ծրագրի բարելավման հարցում չափազանց կարևոր ներդրում է ունեցել մոնիտորինգային խումբը: «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի մոնիտորինգ առաջին անգամ է իրականացվել: Այդ նպատակով դիտարկվել են ԿԾ-ի վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները, շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները, ծրագրի շահակիցների արձագանքը, համագործակցային կապերը, ծրագրի փոփոխությունները, ծրագրի վերանայման և արտաքին գնահատման արդյունքները:

Հիմք ընդունելով վերանայման խմբի և մոնիտորինգային հանձնաժողովի դիտարկումները և վերլուծության արդյունքները՝ մասնավորապես՝ կրթական ծրագրի բացթողումներն ու խոչընդոտները, վերջնականապես մշակվել է «Զբոսաշրջություն» կրթական ծրագիրը: Կրթական ծրագրին համապատասխան մշակվել է նաև նոր ուսումնական պլանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Կրթական ծրագրերի վերանայման հանձանաժողովի աշխատանքների կատարման ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

3. ***Լսեցին.- Հաղորդում II կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին (զեկ. Ա. Մարգարյան):***

Դեկանի պաշտոնակատարը հաղորդեց, որ II կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունները և ստուգումները (I-III կուրսեր), համաձայն գործող ժամանակացույցի, պետք է իրականացվեն ս/թ մայիսի 31-ից հունիսի 3-ը ընկած ժամանակահատվածում: Նույն ժամանակահատվածում կազմակերպվելու են նաև ստուգարքները: Ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետներում պահանջել տոմսերը, թեստերի նմուշները: Ժամանակացույցերը կազմվել են դասախոսների և ուսանողների հետ քննարկումների եղանակով, որոնք ներկայացվել են ՈՒՄՎ հաստատման: Այնուհետև դրանք տրամադրվել են ուսանողներին, դասախոսներին և տեղադրվել է մասնաճյուղի կայքում:

Արտահայտվեց.- Գ. Հովհաննիսյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- II կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

4. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին (2023-2027) (զեկ. Ա. Սարիբեկյան, Գ. Հովհաննիսյան):

Ա. Սարիբեկյանը հաղորդեց, որ համաձայն ԵՊՀ «Կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության (ղեկավար ձեռնարկ)»-ի (թիվ 9/4 գիտ.խորհրդի որոշում, 23.03.2023թ.) «Ֆինանսներ» կրթական ծրագրի ընդհանուր կառուցամասում ավելացվել է կամընտրական չորս դասընթաց, մասնագիտական կառուցամասի պարտադիր դասընթացներից «Դրամավարկային քաղաքականություն»-ը հանվել է, «ՀՀ հարկային համակարգ», «Մենեջմենթի հիմունքներ», «Մարքեթինգի հիմունքներ» դասընթացները դարձել են կամընտրական, 8-րդ կիսամյակում ներառվել է «Ապահովագրական գործ»-ը, ավելացվել է «Հաշվապահական ծրագրեր» դասընթացը, որպես կամընտրական:

Վերանայվել են ծրագրի դասընթացների նկարագրիչները: Բարձր կրեդիտները տրվել են մասնագիտության համար առանցքային նշանակություն ունեցող դասընթացներին, որոնք ընտրվել են դասախոսական կազմի մեծամասնության առաջարկով: Դասընթացների մեծ մասում, նույնպես դասախոսական կազմի առաջարկով, գնահատման չափանիշում մասնակցության միավորը տրվել է ընթացիկ ստուգմանը և ինքնուրույն աշխատանքին: Ա. Սարիբեկյանը կարևոր համարեց այն փաստը, որ երրորդ կուրսի արատադրական պրակտիկան պահպանվեց:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2023-2027 ուստարվա «Զբոսաշրջություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է, հիմք ընդունելով նախորդ տարիների ուսումնական պլանները և ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին: Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ ուսումնական պլանում կատարվել են որոշակի փոփոխություններ, մասնավորապես դասընթնացների կրճատում, որը կարող է դրական ազդել ուսանողի ընդհանուր բեռնվածության վրա: Մեկ արտադրական պրակտիկայի կրճատումը գնահատվեց որպես թերություն:

Արտահայտվեց –Թ. Վարդանյան

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.9 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաստատել ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանները (2023-2027):

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Ա. Մարգարյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***